# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

1417 ÐÐ ¶»Õ³ñùáõÝÇùÇ Ù³ñ½, ·ÛáõÕ í³ñ¹³Óáñ Ñ»é. /+374/091550059/
²É³ßÏ»ñïÇ 16, e-mail Vardadzor.gegharquniq@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

«03» Հունիսի 2016 թվականի N 7-Ն

## ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 30-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10.1-ին հոդվածի, 16-րդ հոդվածի 33-րդ կետի, 20-րդ հոդվածի 3.2-րդ կետի, 30-րդ հոդվածի 6.1-ին կետի, 33.1-ին հոդվածի 1-4-րդ կետերի, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 12-14-րդ հոդվածների, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1-ին հոդվածի 4-րդ մասի, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. նոյեմբերի 19-ի «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» № 1325-Ն որոշումը,

*Վարդաձոր համայնքի ավագանին որոշում է.*

1. Հաստատել «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ 5, դեմ 0, ձեռնպահ 0:

Համայնքի ավագանու անդամներ՝ ________________ Մ. Ավետիսյան

________________ Ճ. Կարապետյանը

________________ Գ. Հայրապետյան

________________ Պ. Մելքոնյան

________________ Ն. Սիրականյան

Վարդաձոր համայնքի ղեկավար՝ ________________ Ռ. Սիրականյան

Արձանագրող՝ ________________ Գ. Ղազարյան